



Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԲ. ՏԱՐԻ - ՍԵՊՏԵՄԲԵՐ 1936 12^{me} Année - Septembre 1936

Խմբագրական

Ձրանսական բարեկարգեալ եկեղեցիներու միութեան հարցը

Զ. Բ. Պ.

Հոգ. կեանք

Քաղաքավարութիւն մը որ Քրիստոսէ ծնունդէ կ'առնէ

Միտ դէպի վեր

Սամուէլ Պ.

Ասիայի եօթը եկեղեցիները

Վեր. Ա. Օ. Փափազեան

Շնորհաց ծովէն

Ես ալ

Ռուբէն Բանիզեան

Կենաց ածուներէն

Նոյեմի եւ իր հարսները

Վեր. Յ. Եղիազարեան

Սերտողութիւն

Կիրակնօրեայ դասերու ներշնչումներ

Վ. Ս.

Ընտանեկան

Քրիստոնեային վկայութիւնը ընտանիքին մէջ

Թարգ. Ի. Յ. Աբրահամեան

Պատանեաց

Փոքրիկ աղջկան մը փափաքը

Յ. Բ.

Թէ՛ ըլլար ինձ հաղար ձայներ

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը թէեւ ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնաթերթն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարաւը կը զգան Աստուծոյ խօսքին անխարդախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բւտի ճշմարիտ «Բան»ին
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարտէյի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրոֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատք. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հայերէնին Թարգմանութիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան
դիւրութիւն կուտայ որ թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՖ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նաեւ բոլոր թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:

|||||

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա 20 Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք

ԹՈՒՐԻՔԵՐԷՆԸ Ֆրանսա 10 Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք

ՀԱՅԵՐԷՆ ԵՎ ԹՈՒՐԻՔԵՐԷՆ միասին Ֆրանսա 25
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 25 Ֆրանք

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ իսկ դրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère


MARSEILLE (France)

Ֆրանսայի դրամական առաքումներու համար մեր Compte Chèque Postalն է H. N. Ghazarossian, 182, 53 Marseille

Le Gérant: M. le PASTEUR KALTENBACH

Արթնցի'ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա'լ վախճանք, որ չըլլայ Թէ
Անոր Կանգնողը մանկու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը գրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս.
Կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է'
պիտի գայ ու պի-
տի յուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԲ. ՏԱՐԻ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1936

ԹԻԻ 9



ՖՐԱՆՍԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳԵԱԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ

Բ.

Փոխադարձ հասկացողութեան, վստահու-
թեան: անկեղծութեան եւ սիրոյ մթնոլորտի մը
մէջ միայն կարելի էր յաջողեցնել այսպիսի դժ-
ուարին առաջադրութիւն մը: Մթնոլորտը սա-
կայն կարծուածին չափ ալ նպաստաւոր չէր:

Առաջին եւ ամենազգուարին արգելքը, որուն
հանդիպեցաւ այս ձեռնարկը, վարդապետական
հարցերն էին: «Միացման սկզբունքը կը փըն-
տուի հո'ն ուր կը գտնուին բաժանման սկզբունք-
ները, իմա վարդապետական հարցերը» կ'ըսէ
քննադատ մը: «Տակաւին բաժանում ծնող կէտե-
րուն մէջ է որ մերձեցնող լուծում մը գտնելու
ենք» կը պատասխանեն միացման ձեռնարկու-
ները: Եթէ կ'ուզենք մնայուն հիմեր ձգել, չենք
կրնար նկատի ունենալ լոկ «այն բաները որոնք
մեզ կը միացնեն» աչք գոցելով լուրջ տարակար-
ծութեանց որոնք ուշ կամ կանուխ կրնան պա-
ռակտել նոր միացեալ եկեղեցին: Ուրեմն կարե-
ւոր է կապուիլ բոլոր էական կէտերու մէջ միա-
բանելէ յետոյ: Բայց որոնք են էական կէտերը,
ահա զգտութեան խնձորը:

••

Ինչպէ՞ս գտնել միացման հիմը:

Անշուշտ միութիւնը ցանկալի է կ'ըսեն կարգ
մը պահպանողականներ, սակայն հարցը դեռ
խակ է: Շիտակ է որ Ե. Բ. նոյնը մնացած չէ,
հետզհետէ կը հակի մեր վարդապետութիւննե-
րուն, սակայն այսօր դեռ կանուխ է: Սպասենք

որ աւելի լեցուի մեզ գաղտնի գաղափարական
խրամատը, յայնժամ տարակարծութիւն չենք
կրնար ունենալ:

— Ի՞նչ կ'ըսեն Ե. Բ. ի պետերը, կ'ուզէ՞ք մեր
առաջարկին ընդ առաջ երթալ թէ ոչ: Յօժա՞ր
էք նկատի առնել մեր արդի վիճակը, մեր ար-
ժանիքները եւ ներկայի պայմանները: Կը հաւա-
նի՞ք գործակցիլ ձեր դէմը կայնող մարդոց հետ
այնպէս ինչպէս որ են, առանց սպասելու ապա-
գայի թէական մտափոխման մը:

— Բարի՛, այն ատեն ընդունեցէք մեր 1872ի
պաշտօնական հաւատոյ հանգանակը եւ մեր հո-
վիւններուն մեր առաջարկած ձեռնադրութեան
բանաձեւերը:

— Այս պիտի նշանակէր մեր ձեր մէջ ձուլ-
ուիլը, կ'ըսէ Ե. Բ. եթէ այս ըլլար մեր փափա-
քը, ինչո՞ւ սպասէինք 30 տարի եւ այսօր ալ ձեռ-
նարկէինք Միացման այս տաժանելի եւ կնճոտ
աշխատութեանց: Մեր կարգին մեր հանգանակը
կ'առաջարկենք ձեզի, ի՞նչ են ձեր դիտողութիւն-
ները:

Յետ քննութեան Ե. Բ. Ե. պատասխանեց իր
քննադատութիւնները ընելով, այս կերպով մատ-
նանշուած եղան բոլոր զգուարութիւնները:

Ահա թէ ինչու որոշուեցաւ պահ մը թողուլ
երկուստեք, ցարդ ընդունուած երկու հանգանակ-
ներն ալ եւ խառն ժողովի մը գործակցութեամբ
խմբազրեւ՝ նոր հաւատոյ հանգանակ մը եւ
ձեռնադրութեան նոր բանաձեւ մը: Ապա այս
երկու ծրագիրները յղել եկեղեցիներու:

Նոր բանաձևերը.—

Շատ երկար խորհրդակցութիւններէ եւ զանազան Միութեան ժողովներու վստահութեան քուէներու շնորհիւ էր որ Յանձնախումբը կըրցաւ նախ շարունակել իր աշխատութիւնները եւ հոսկ յետոյ զլուխ հանել նոր բանաձևերը:

Սակայն սա ամենէն խիստ յարձակումներու եւ քննադատութիւններու տեղի տուաւ. ջգայնացնող կէտերն ըլլալով հետեւեալ երկու հատուածները.—

ա. «Եկեղեցին կը հաստատէ Ս. Գրոց գերագոյն հեղինակութիւնը — այնպէս որ (կամ այն չափով որ) կը հաստատէ Սբ. Հոգիին ներքին վրկայութիւնը — եւ զայն կ'ընդունի իբր հաւատքի եւ կեանքի կանոն»:

Վերի ընդգծումը մերն է: Այդ մասը արդարեւ չգտնուիր 1872ի հանգանակին մէջ որ միայն կ'ըսէ, «Կը հռչակենք Ս. Գրոց գերագոյն հեղինակութիւնը հաւատքի խնդիրներուն մէջ»: Այս կէտին վրայ, ընդգծեալ մասը աւելցուած է իբր E. R. ի սիրական թէզը: Պահպանողականները զայս կը նկատեն թերահաւատութեան եւ փախուստի դուռ մը: Աստուծոյ խօսքը անխտիր եւ անխափան մեր գերագոյն հեղինակութիւնն է կ'ըսեն, ինչպէ՞ս պայման ընել որ Ս. Հոգւոյն մեր մէջ հաւաստած չափովը ընդունինք զայն: Այս պիտի նշանակէր մեր խղճին լուսով դատել Ս. Գրքը եւ հետեւաբար նաեւ մերժել այն մասերը որոնք համաձայն չեն զար մեր լոյսին եւ համոզման:

Երբ մենք Սբ. Գրքին առջեւ ենք, անկէ ելլող լոյսը մեզ կը պատժէ եւ կը դատէ, այն ուժը որ զիս Յիսուս Քրիստոսի գերի կ'ընէ կը կազմէ Ս. Գրքին հեղինակութիւնը: Բանաձևերը ի՞նչ են որ Ս. Գրքին ուժը եւ հեղինակութիւնը պիտի կրնան սահմանել: Մենք կը վախնանք «զրէն որ կ'սպաննէ» ու ձեր տեսութիւնը սխալ է ու վնասակար հոգեւոր կեանքի կ'ըսէ E. R.

Տարակարծութիւնը հիմնական եւ ծանրակշիռ է: Եթէ չենք կրնար կասկածի տակ զնել արդիականներու անկեղծութիւնը եւ անձնական համոզումները, շատ լաւ կրնանք հասկնալ նաեւ պահպանողականներու իրաւացի առարկութիւնները: E. R. ի վարդապետները կրնան է՛ն քնքով եւ ճկուն բանաձևներու մէջ ծրարել իրենց համոզումները, զանոնք գրաւիչ, ապահով եւ ընդունելի դարձնելով: Սակայն վարդապետօրէն ի՞նչ է մերկ իմաստը: «Կրնանք ընդունիլ Սբ. Գրոց ա՛յն մասերը միայն, զորս Սբ. Հոգւոյն լոյսին տակ մեր խղճերը կրնան ընդունիլ: Մեր ընդու-

նիլ չկըցած մասերը մեզի համար հեղինակութիւն չեն»: Այսպէս վտանգաւոր դուռ մը բացուած է: Սուրբ Գրքը փոխան խիղճը կըրթելու, կ'ենթարկուի անոր քննութեա՛ն...: Արդ, ամէն ընթերցողի խիղճ կը տարբերի անհատին լոյսերուն, շրջանակին, անհատականութեան եւ բազմապիսի պայմաններուն համաձայն: Ապա խիղճերը կըրնան խաբուիլ, ծոխիլ, խանձուիլ եւ անզգայ դառնալ: Նոյն իսկ Սուրբ Հոգիով լուսաւորուած խիղճ մը չներկայացնէր կատարեալ երաշխաւորութիւն մը: Ո՞վ իրաւաբար կրնայ ըլլալ երբ երկու «լուսաւորուած» խղճեր հակոտնեայ թեզեր պաշտպանե՛ն... բաց աստի Սուրբ Հոգւոյն ձայնը կրնայ չլսուիլ, կեղծուիլ եւն:

Իսկ այդ չընդունուած մասե՞րը, որոնք են, որո՞նք խղճին չընդունած մասը պատուենք Սուրբ Գրքէն, այդ մասերը ի՛նչ վարդապետութիւններ կը պարունակեն, Քրիստոսի անձին եւ գործին ո՞ր մասերուն կը վերաբերին, նոյնքան կախման կէտերով եւ հարցման նշաններով կարելի է վերջացնել այս բանաձևը:

բ. «Որ մեր յանցանքներուն համար մատնւեցաւ եւ մեզ արդարացնելու համար յարութիւն առաւ»:

— Այս խօսքերով կ'ըսէ E. R. մենք ոեւէ վարդապետութիւն չենք ընէր: Պարզապէս կ'ըսենք որ Քրիստոս մեզի համար մեռաւ, այսպէս խաչը իր տեղը կ'առնէ քրիստոնէական կեանքի մէջ, եւ մարդուն մեղքը իր Փրկչին մահուան կապած կ'ըլանք:

— Պողոսի այս խօսքին մէջ, կ'ըսէ E. R. E. անտարակոյս որոշ վարդապետութիւն մը կայ: Մենք անով կ'արտայայտենք մեր հաւատքը Աստուծոյ փրկարար ծրագրի մասին, Որդիին քաւ չարար եւ փոխանորդական մահուանը մասին:

— Իրողութեան մասին համաձայն ենք, բայց ո՛չ բացատրութեան մասին, կ'ըսէ E. R. «բոլոր» ալ գիտենք որ Փրկչին մահը մեր մեղքին կապուած է, եւ թէ մեր կեանքը Իր կեանքէն անբաժանելի է, սակայն երբ հարցը կուգայ սահմանելու ընոյթը այն կապին՝ որ Իր մահուան եւ Իր յարութեան կը կապէ մեր մեղքը եւ մեր փրկութիւնը, երբ երեւան կուգան աստուածաբանական բառեր՝ փրկագործութիւն, քաւութիւն, գնում... համաձայնութիւնը կը դադրի»: Ահա խօսքերը նոյն ինքն E. R. ի նախադահին:

— Ուրեմն դուք կ'աշխատիք համաձայնիլ հատուածի մը շուրջ, որուն տարբեր մեկնութիւններ կուտաք կ'ըսեն իրատես քննադատներ:

Յարակից դժուարութիւն մ'էր նաեւ հովիւներու ձեռնադրութեան բանաձեւը: Պահպանողականները կը փափաքէին որ ձեռնադրեալը յանձն առնէ հաւատարիմ մնալ հանգանակին, եկեղեցիին ընդունածին պէս քարոզելով պարունակուած վարդապետութիւնները: Ե. Բ. պնդեց որ ամէն ոք ազատ ըլլալու է իր գիտցածին պէս մեկնելու: Հանգանակը կապ մը չէ վարդապետական միօրինակութեան, այլ կապ մը պապեֆական աւանդութեան հետ...:

.*

Աւետարանական քրիստոնեաներ.—

Ե. Բ. Ե. ի ծոցին մէջ պահպանողական տարրը ծանօթ է իբր Աւետարանական քրիստոնեաներու խումբը: Այս կազմակերպութիւնը գոյութիւն ունի 13 տարիներէ ի վեր, կազմուած թէ՛ Ե. Բ. Ե. ի հովիւներէն, թէ՛ ալ տարբեր յարանուանութեանց առաջնորդներէն: Անոնք իրենց բոլոր ուժով աշխատած են տարածել պահպանողական վարդապետութիւնները եւ գործած են արթնութեան համար: Իրենց մէջ կը հաշուեն Ֆրանսայի հեղինակաւոր, բանիմաց եւ գիտնական հոգեւոր առաջնորդներէն շատեր:

Միութիւնը արդէն դժգոհ էր Ե. Բ. Ե. ի ընդհանուր կեանքէն: Մենք կորսնցուցած ենք մեր նախկին կորովը կ'ըսէին: Մեզմէ շատեր հաւատարիմ չեն մեր դրօշին: Կ'ողբան եւ կը մատնանշեն իրենց համայնքներուն արդիական հակումները, եւ ոչ մէկ առիթ կը փախցնեն իրենց ազդեցութիւնը ի սպաս դնելու Ե. Բ. Ե. ի հոգեւոր զարգացմանը:

Ե. Բ. ի հետ միացման ծրագիրը բուն յուզմունք եւ բողոք յառաջ բերաւ իրենց մէջ: Վերը յիշուած տեսակէտներէն ոմանք ուղղակի իրենց պաշտօնաթերթին միջոցաւ պաշտպանուած են: Խառն ժողովին եւ Միութեան ժողովներուն մէջ ալ լուրջ միջամտութիւններ ըրին: Միանալ եկեղեցիի մը, որուն քարոզիչները կ'ընդունին իբր արդիականներ, եւ միանալ եկեղեցիի մը — որ բացի կարգ մը տեղերէ — զուրկ է կենսատու հոգեւորութենէ մը, իրենց համար ընդունելի ծրագիր մը չէր: Ինչպէ՞ս համաձայնինք անոնց հետ, որոնց լայն կոչուած աստուածաբանական կարծիքները նոյն ինքն ժխտումներ են մեր էական դաւանութեանց:

Ազատ համարձակ քննադատեցին իրենց ղեկավարները: Յանդիմանեցին զանոնք իբր ճշման տակ ծոց եւ երերուն մտքի տէր մարդիկ: Ըսին թէ 1872ի դաւանանքէն դուրս ուրիշ բան

պէտք չէր իրենց, եւ ինչո՞ւ զոհել դաւանական կարեւոր հատուածներ, միութեան մը սիրոյն որ խորունկ եւ ճշմարիտ հիման մը վրայ չէր դրուած: Յաճախ ցոյց տուին որ առաջադրուած նոր բանաձեւերը երկդիմի եւ երկիմաստ են. մի վրաստահիք մեկնութեանց որոնք շատ վարպետօրէն տրուած են, ըսին: Ազդարարեցին զգուշանալ բռնեցող խաղէն, որոնց մէջ մեծ անարդանք մը կը տեսնէին աստուածային սրբութեանց դէմ: Անոնց անկեղծութեան կրնաք հաւատալ ըսին, բայց մի վստահիք իրենց, քանզի անոնք, իրենց լայնարձակ սկզբունքներուն շնորհիւ կրնան ձեզի պէս ստորագրել եւ ձեր հաւատքէն տարբեր եզրակացութեան գալ: Իսկ եթէ միանաք, ազդարարեցին, մենք չպիտի հետեւինք շարժումին եւ պիտի շարունակենք մինչեւ հիմա մեր քալած ճամբայէն, պահպանելով մեր հայրերուն մեզի թողած աւանդը:

Այս էր ամիսներու ընթացքին գործածուած լեզուն, ինչ որ զգալի տպաւորութիւն գործեց վերին մարմիններու վրայ: Չէին ուզեր կորսնցնել իրենց եղբայրները, անոնց բոլոր արժանիքներով, չէին ուզեր կորուստով շահիլ, ուստի աւելի պահանջկոտ դարձան:

Ձանազան համայնքներ արտայայտուեցան ի նպաստ այս դիրքին: Այսու Խառն Յանձնաժողովին գործը յոյժ դժուարացաւ: «Մեր եղբայրները դժգոհ են» կ'ըսէ Ե. Բ. Ե. «Մենք եկած ենք մինչեւ հոն՝ ուր անկեղծօրէն կրնանք գալ» կ'ըսէ Ե. Բ. «արդէն մերիններէն ոմանք ալ չեն ուզեր մեզի հետ քայլ նետել»:

Այսպէս 1936 Փետրուարին, պահ մը կարծուեցաւ թէ բանակցութիւնները պիտի խզուէին: Ճիշդ այդ պահուն սակայն, նոր իրողութիւններ նոր տարրեր երեւան բերին: հարցը նոր զարկ եւ կարելիութիւն ստացաւ:

Բայց այս կէտը յաջորդով:

Զ. Բ. Պ.

Փարիզ

Դիտ. Ե. Բ. Ե. ինչպէս անցեալ թիւին տեսանք, Eglises Réformées Evangéliques է, իսկ Ե. Բ. Eglises Réformées, առաջինը աւետարանական, երկրորդը արդիական:



ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ
ՈՐ ՔՐԻՍՏՈՍԷ ՇՆՈՒՆԻ
Կ'ԱՌՆԷ

(Փիլ. Ա. 1 եւ 2)

«Պօղոս եւ Տիմոթէոս»: Ի՞նչ գեղեցիկ է հոս գործածուած «եւ» շաղկապը՝ որ նուիրական միութեամբ եւ սրբազան ուխտով մը իրարու կը կապէ տարէց Առաքեալը եւ երիտասարդ Տիմոթէոսը: Արդեօք անոնք որքան կը պարտէին իրարու իրենց հոգեւոր ծառայակցութեան մէջ: Տիմոթէոս իր երիտասարդ ու ջերմ խանդավառութեամբ՝ արդեօք ի՞նչ աստիճանի կ'ողակտէր ծերացած Պօղոսը: Քաղցր է խորհիլ թէ՛ երբ Պօղոս իր վերջին օրերուն սահմանափակ կեանքի մը ենթարկուած էր, ու մարդիկ կասկածանքով կը նայէին իրեն, անիկա կարող էր խմել երիտասարդի մը բուռն սիրոյն յորդ աղբիւրէն, հոռոտել անոր քաղցր համակրութեան բուրումնաւէտ ծաղիկները ու ճաշակել անոր շնորհալի հոգւոյն առաջին քաղցր պտուղները: Որչափ գեղեցիկ ըլլալու էր անոնց ընկերակցութիւնը: Երիտասարդ Տիմոթէոս՝ յարգանքով լեցուած տարէց Պօղոսին հանդէպ եւ տարէց Առաքեալը հեռի նախատելէ անոր երիտասարդութիւնը կամ կասկածանքի նշոյլ մ'իսկ ցուցնելէ անոր փորձառութեան պակասին ընդդէմ: Մէկը միւսին կը ծառայէր իր եղանակին յատուկ ծաղիկներովն ու պտուղներովը: «Պօղոս եւ Տիմոթէոս»: Միութիւն մը որ կը կապէր զարունը աշնան, խանդավառութիւնը՝ փորձառութեան, փութկոտութիւնը՝ իմաստութեան եւ մատղաշ յոյսը՝ հանդարտ ու զեղուն վստահութեան հետ:

«Յիսուս Քրիստոսի ծառաները»: Առաքեալները պարծանքով կը ցուցադրէին իրենց Տէրոջ դրոշմը: Առաջին բանը զոր Պօղոս մեզի կը ցուցնէ այս թուղթին մէջ՝ Տէրոջմէ իր ընդունած զորոշմն է: Վերջերս ոչխարներու խուզման ներկայ գտնուեցաւ: Տեսայ թէ անաբեկ ոչխարին ծանր բուրդը խուզուելէն վերջ՝ անոր մորթը կը դրոշմուէր իր տէրոջը անուան սկզբնատառերով, որուն վրայ ազատ արձակուելով՝ ոչխարը ցատկոտելէն կը հեռանար, յայտնապէս ցուցադրելով իր տէրոջ անուան նշանները: Պօղոս ու Տիմոթէոս ալ ծանր բեռն մը ազատած էին: Խաչեալ

Տէրոջ մը զօրութեամբ՝ անոնց վրայէն վերցուած էր ճշիշ ունակութիւններու զգեստը եւ անոնք իրենց ազատագրուած մարմիններուն վրայ կը կրէին իրենց Տէրոջ նշանները: Կը պատկանէին Անոր, որ զիրենք ծանր գնով ծախու առած էր եւ Տէր Յիսուսի գերիները ըլլալին ու Անոր դրոշմը կրելն իրենց պարծանք եւ ուրախութեան պսակ կը նկատէին:

«Քրիստոս Յիսուսով բոլոր սուրբերուն որոնք Փիլիպպեցւոց կողմերն են»: Սուրբերը այլազան միջավայրերու մէջ կ'ապրին: Փիլիպպէի մէջ էր որ ամբոխը այնքան թշնամական ու խիստ վերաբերում ցուցուցած էր: Հոն էր որ Պօղոս շատ մը վէրքեր ստացաւ ու բանտը դրուեցաւ եւ ոտքերը կոճղի մէջ ամրացուեցան: Թերեւս ենթադրուէր թէ այդպիսի խիստ հալածանքներու տակ փոքրիկ եկեղեցին պիտի ջնջուէր ու այդ կարգի կիզիչ հակառակութեան տակ քրիստոնէական հաւատքի եւ յոյսի մատղաշ տերեւները պիտի խամրէին: Սակայն Ան որ լեռներուն վրայ խոտ կ'աճեցնէ՝ Փիլիպպէի մէջ տեղի ունեցած բնաջնջումներու պարագային խնամեց իր սուրբերը: Քանզի անոնք թէպէտեւ Փիլիպպէի մէջ կ'ապրէին, բայց Քրիստոս Յիսուսի մէջ կը գտնուէին: Այս էր անոնց համբերութեան զաղտնիքը: Քրիստոս Յիսուսի մէջ արմատացող անհատ մը կրնայ որեւէ տեղի մէջ ծաղկիլ: Անոնց մէջ էր Լիդիա ու այն մի քանի կիները որ գետին եզերքը կը հաւաքուէին աղօթելու: Հոն էին բանտապետը ու անոր ընտանիքը: Նաեւ շատ ուրիշներ որ այն քանի մը հատին հաւատարմութեամբը շահուած էին ու որոնց անունները կենաց զրքին մէջ արձանագրուած են: Այս՝ բաղաւտաբար ափ մը ժողովուրդը կը ջանար անուշցնել Փիլիպպէի բազմամարդ ու բազմազբաղ քաղաքը, ինչպէս որ փոքրիկ, հոտաւէտ ծաղիկ մը իր բոյրը կը տարածէ ընդարձակ սենեակի մը ամէն կողմը:

«Եպիսկոպոսներով ու սարկաւազներով»: «Որո՞ւ որ պատիւ՝ պատիւը»: Այս մարդիկն էին որ կարօտեալ առաքեալին զրկուած օգնութիւնը հանգանակած էին, ուրեմն պէտք էր անոր մասնաւոր եւ ճոխ գնահատութեան արժանանալին: Պօղոս առաքեալ քաղաքավարութեան իշխան մըն էր: Քաղաքավարութիւնը մասնաւոր ջանքի մը արդիւնքն է, այլ շնորհքի պտուղը: Գոյութեան կուգայ ծնանելով եւ ոչ թէ շինուելով: Պօղոս Աստուծոյ շնորհքով լեցուն էր ու բնազդօրէն երեւան կուգար անոր քաղաքավարութիւնը՝ ամէն ուր որ հարկը կը պահանջէր:

Մեքենական քաղաքավարութիւնը հաճելի չէ եւ յաճախ աւելի գրգռիչ քան ամոքիչ ազդեցութիւն մը կը ձգէ։ Օր մը ցայտաղբիւր մը տեսայ սեղանի մը վրայ՝ որուն նուրբ ջրափոշին հաճելի պատկեր մը կը ներկայացնէր աչքերուն, սակայն անմիջապէս ականջիս հասաւ ձայնը այն մեքենայութեան որուն շարժումներով յառաջ կուգային ջուրին ցայտումները։ Որչա՛փ տարբեր է բնական ցայտաղբիւրը, որ անտեսանելի խորութիւններէ ինքնաբերաբար ու անշշուկ կը ցայտէ ջինջ ու պայծառ։ Զշմուրիտ քաղաքավարութիւնը բնական աղբիւրէ մը կը բղխէ ու կը մղուի անհունէն։ Պողոս առաքեալին քաղաքավարութիւնը կենաց ջուրի գետ մըն էր՝ որ կը ցայտէր Աստուծոյ ու Գառնուկին գահէն։

«Շնորհք ու խաղաղութիւն ձեզի»։ Այն ահը, որմէ առաքեալին քաղաքութիւնը կը բղխէր՝ Շնորհքն էր։ Ուրեմն անոր ցոյց տուած քաղաքավարութիւնը կ'ընդարձակի աղօթքի մը՝ որով Աստուծոյ գերագոյն պարգեւը, շնորհք, կը հայցէ Փրկիպաւեցող վրայ։ Շնորհքը կը պարունակէ ամէն ուրիշ պարգեւ։ Սակայն ո՞վ կրնայ շնորհք բառին սահմանը տալ։ Սէ՛ր է. սէրէ աւելի է։ Սէր մըն է որ խորհրդաւոր յաւելում մը ունի։ Սէր մը որ երբեք չձանձրանար, սէր մը որ շարունակ ինքզինքը կուտայ առանց սպառման ամենափոքր նշոյլը ցուցնելու։ Կրնայ նմանցուիլ բարեփութի, այն հրաշալի քիմիական նիւթին որ անդադար տաք ճառագայթներ կ'արձակէ առանց իր նախնական ուժին նուազման ամենափոքր նշոյլը ցուցնելու։ Մարդկային սէրը կրնայ թուլանալ, անոր ճառագայթները կրնան պաղիլ ու ընդհատուիլ, սակայն Շնորհքը կը սիրէ, կը սիրէ ու անոր պայծառ ներկայութեան առջեւ ոչ առաւօտ, ոչ երեկոյ եւ ոչ ալ գիշեր գոյութիւն ունի, այլ անընդհատ կէսօր է։ Շնորհքը աստուածային սիրոյն այն ուժն է որ սիրուելու ռեւէ հանգամանք չունեցողները կը սիրէ ու զանոնք իր սիրունութեամբը կը զարգարէ։

Առաքեալը շնորհքի հետ կը մաղթէ նաեւ «խաղաղութիւն»։ Ուր որ շնորհք կայ, հոն խաղաղութիւն կը բնակի։ Շնորհք եւ խաղաղութիւն անբաժան ընկերներ են։ Շնորհքն է այն սկզբնատարրը որուն մէջ մեր բոլոր ոյժերը արթնանալով երջանիկ գործունէութեան կ'սկսին։ Խաղաղութիւնը ոչ շարժման այլ շփման բացակայութիւնն է։ Խաղաղութեան ճշմարիտ խորհրդանշանը ոչ թէ լեռներու մէջ պահուած անշարժ լըճակը, այլ վեհօրէն սահող առատահոս գետն է։ Երբ շնորհք կը տիրէ, մարդիկ կատարեալ միա-

բանութեամբ կը քալեն Աստուծոյ հետ եւ առանց դժուարութեան կը գործակցին իրենց ընկեր արարածներուն։ Երբ Շնորհքը կը տիրէ, կեանքի ճնշումն ու ծանրութիւնը կը կորսուին եւ ամէն բան բարիի գործակից կ'ըլլայ։

«Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիստոսէ»։ Ուրեմն շնորհքի ու խաղաղութեան ջինջ ու կենսատու գետը ծագում կ'առնէ երկու երկրագունդերու պատկանող սակայն անբաժանելի լիճէ մը որ կը կոչուի «Աստուած մեր Հայրը ու Տէր Յիսուս Քրիստոս»։ Առաքեալը ամենաճշգրիտ կերպով, քայլ առ քայլ կը հետեւի այս գերբնական պարզեցումներուն՝ մինչեւ որ կը հասնի առանց բուն ծննդավայրը։ Կանգ չառնէր անոնց հոս ու հոն երեւան ելած տեղը, եւ իր գոհերը երկրորդական ու նուաստագոյն սեղաններու վրայ չմատուցանէր։ Ամէն ստորակարգ պաշտօնեաներէ ու քահանայութիւններէ անցնելով կը ձգտի գերիշխան սրբութեան ու սիրոյ վեհ ու եզակի բարձրութեանց՝ ու հոն կ'երկրպագէ ու կը փառաբանէ երեսանկեալ։ Զանազանութիւն կը դնէ ջրանցքներու եւ աղբիւրների, միջոցներու եւ պատճառներու միջեւ ու իր փառաբանութեան երգերը կը բարձրացնէ Աղբիւրին։ Ամէն բարի ու կատարեալ պարգեւ վերէն կուգայ. ուրեմն Շնորհքին ու խաղաղութեան անհուն գետին ծագումը կը փնտռէ ու կը գտնէ այն բարձր Ակին մէջ որ «Աստուած» կը կոչուի։ Զգուշութեամբ ուշադիր ըլլանք նաեւ տեսնելու թէ ինչպէս առաքեալը հաստատապէս ու բնականօրէն Տէր Յիսուս Քրիստոսը կը բարձրացնէ Աստուածային գերիշխանութեան գերագոյն աստիճանին։ Փրկարար շնորհքը ծագում կ'առնէ այն Ակէն՝ որ կոչուած է «Հօր Աստուծմէ ու Տէր Յիսուս Քրիստոսէ»։ Մեր փրկութիւնը կը ծագի ու կը պահպանուի այս կրկնակի Աղբիւրէն։ Քրիստոս մասնակից է Հայր Աստուծոյ փրկութեան փառաւոր գործին ամէն մէկ ճիւղին։ «Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիստոսէ»։



Սոյն յօդուածը առաջինն է այն յօդուածաշարքին, զոր Աստուծոյ զաւակ մը պատրաստած է փիլ. գիրքէն քաղելով։ Եթէ Տէրը, կամքի ամէն թիւի յաջորդաբար յօդուած մը պիտի հրատարակէ, այն վստահութեամբ թէ մեծ օրհնութիւն պիտի ըլլայ շատերուն։

ՄԻՇՏ ԴԷՊԻ ՎԵՐ

.....

Թեւ առ թըռի՛ր, միշտ դէպի վեր, աւելի վեր ո՛վ հոգիս,
Այս՝ տաք, կըրրակ տենչն է սըրտիս, վըսեմ պահանջն հաւատքիս:
Մի՛շտ դէպի վեր, մի՛շտ դէպի վեր, մինչեւ Փըրկիչս աննըման,
Զի նա ինծի ամէն բան է, ո՛հ, ամէն բան, ամէն բան...

Արեւս է Ան, — անյատակ աղ՝ կեանքի, լոյսի եւ սիրոյ,
Ճըշմարտութեան, գեղեցկութեան, վըսեմութեան եւ բարւոյ:
Ինքն Աղբիւրն է երջանկաբուղիս խաղաղութեանս անսահման,
Ալ ի՞նչ կ'ուզեմ, Ան ինձ համար ամէն բան է յաւիտեան...

Օ՛ն, թեւերուդ թափ տուր ուժգին, թափ տուր, թո՛ւր դէպի վե՛ր,
Ժամանակը ո՛հ, խիստ կարճ է, դարձիւր կըտրիճ, անվեհեր:
Գիտեմ, թէեւ ճամբադ նեղ է, վերելքդ՝ սեպ, վազքդ դաժան,
Բայց Սուրբ Հոգին քեզի կ'օգնէ, Ան ընկերդ է անբաժան:

Թա՛փ տուր, թըռի՛ր, թըռիւր արագ, միշտ դէպի վեր, Յիսուսի,
Ետ մի՛ դառնար, անյետադարձ ճախրանքդ երբեք չը կասի:
Զի փորձութեան այդ պահն գուցէ հոգիդ թովէ ուժգնօրէն,
Ու քաշէ վար, դէպի աշխարհ՝ մեղքի հնոցն անօրէն:

Կանգ մի՛ առներ, ետ մի՛ նայիր, թող թըռիչքդ չը կասի:
Աշխարհ արդէն պըղծութեան մէջ մեղքի բոցով կ'հրկիզի՛...
Իսկ դուն փախի՛ր, թըռի՛ր միշտ վեր ազատութեան երգերով,
Զի վերելքդ քեզ կը տանի կեանքի Սեգովրն ապահով:

Երգով ճախրէ, զի մէն մի վանկ ազատութեան այդ երգին՝
Ճըշմարտութեան, լոյսի, սիրոյ, կեանքի սերմ մ'է թանկագին:
Հոգ չէ՛, քամին պիտի ցրուէ երգիդ շեշտերն պատուական,
Բայց կարծր սիրտ ժայռերն իսկ զայն կ'արձագանգեն անպայման

Ա՛րդ, լիաթոք երգէ ուժգին, թափահարէ ու թըռի՛ր, 
Թող հազարներ մաքնիսանան այդ հետքերուդ լուսալիր...
Մեղքով մըռայլ անյուսութեան այս խոր ձորէն անհրապոյր՝
Երգովդ գուցէ շատեր շահի՞ս Փըրկիչիդ համար կենսաբոյր:

Օ՛ն, թեւերդ թափահարէ, ու սըլացիր ո՛վ հոգիս,
Այս՝ տաք-կըրրակ տենչն է սըրտիս, վըսեմ պահանջն հաւատքիս:
Մի՛շտ դէպի վե՛ր, միշտ դէպի վե՛ր, մինչեւ Փըրկիչս աննըման՝
Ան ինձ համար ամէն բան է, ո՛հ, ամէն բան, ամէն բան...

ՍԱՄՈՒԷԼ Պ.

ԱՍԻԱՅԻ ԵՕԹԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

...000

(ԶՄԻՆԻՆԻԱ Յ. Տ. 100-313)

Հալածանաց եկեղեցին Յայտ. Բ. 8-11

Զմիւռնիա (Իզմիր) Եփեսոսէ յետոյ ամենամօտ քաղաքն է Պատմասի:

Հին քաղաքը բլուրի մը վրայ հիմնուած Մեծն Ալեքսանդրի օրով, բոլորովին աւերակ է, իսկ վերջինը 1922ի արհաւիրքին հրոյ ճարակ եղած, 1932ին թուրքեր սկսան վերաշինել:

Ս. Գրոց մէջ առաջին եւ վերջին անգամ ըլլալով Յայտնութեան 2 գլուխներուն մէջ կը հանդիպինք Զմիւռնիա անուան:

Ո՛վ քարոզեց հոս, որո՞ւ միջոցով կազմուեցաւ եկեղեցին, չենք գիտեր. հաւանաբար Պօղոս առաքեալ Եփեսոս եղած ատեն հոս ալ այցելեց: Զմիւռնիա 36 մղոն հեռավորութիւն ունի Եփեսոսէ եւ շատ կարեւոր կեդրոն մըն էր այն ատեն: Պօղոկարպոս, Յովհաննէս առաքեալի հաւատարիմ եւ արժանաւոր աշակերտը երկար ատեն հովուած է այս եկեղեցին (Յ. Տ. 81-167) ուր նա մարտիրոսուեցաւ իր Փրկչին սիրոյ վկայութեամբը:

Զմիւռնիա եղած է հալածանքի եւ մարտիրոսութեան վայր մը, ուր շատեր անտանելի նեղութիւններու ենթարկուած են: Անգամ մը հասարակաց վայրի մը մէջ 1500, ուրիշ անգամ 800 հաւատացեալներ ջարդուած են եւ իրենց կեանքը զոհած, իրենց համար մեռնող Փրկչին սիրոյն:

Զմիւռնիա, ըստ յունագէտներու, Սմիրնա բանն է, որ հայերէնի մէջ այլ տեղեր թարգմանուած է զմուռս, Մատթ. Բ. 11, Մարկ. ԺԵ. 23, Յովհ. ԺԹ. 39: Ծառի մը վէրքէն հոսող հիւթը, որ անուշ հոտ մը կը բուրէ եւ հականեխական ու զօրացուցիչ յատկութիւն մը ունի:

Օրհնեալ անուն մը ճշմարիտ հաւատացեալին, այն հաւատացեալին որ Տէր Յիսուս Քրիստոսի կողէն ծնած է եւ ծեծուելով (հալածանքով) անուշ հոտ մը կ'ըլլայ աշխարհի մէջ Բ. Կոր. Բ. 15, Եփես. Ե. 2):

Եկեղեցին որ մեռեալ մարդկութեան մէջ հականեխիչ զօրութիւն ունի, իր մեծ նեղութեան եւ հալածանքին մէջ իսկ շատերը կը զօրացնէ, Բ. Կոր. Դ. 10, Զ. 10:

Տէրը կը յայտնուի այս եկեղեցիին «Առաջինը եւ վերջինը, որ մեռաւ եւ կենդանացաւ

Հմր. 8: Այսինքն Ինքն է ամէն բանի մէջ ամէն բան, գիտէ մահուան ցաւը, սակայն ունի յարութեան զօրութիւնը Յայտ. Ա. 17-18:

Տէրը գիտէ եկեղեցիին գործերը, քաջած նեղութիւնը եւ իր արտաքին աղքատութիւնը: Աշխարհի վրայ մեծ գործեր, հսկայ կազմակերպութիւններ չունի, սակայն երկինքի համար հարուստ է. օրհնեալ վկայութիւն: Արդեօք Ինչ կ'ըսէ Տէրը քեզի եւ ինծի համար ալ Ղուկ. ԺԲ. 21: Ա. Տրմ. Զ. 17-18, Յակ. Բ. 5:

Հաւատացեալներ կան, որ նիւթապէս հարուստ են, սակայն հոգեւորապէս աղքատ եւ հացի կարօտ, իսկ կան հաւատացեալներ որոնք թէեւ արտաքին փայլ եւ հարստութիւն չունին, սակայն հարուստ են Տէրովմով, եւ զանաւոր ունին երկինքը, լեցուն են Աստուծոյ խօսքին առատութիւնովը: Այս վերջիններէն էր Զմիւռնիա:

Եկեղեցիին արթնութիւնը եւ Քրիստոսի սիրոյն համար ունեցած վկայութիւնը պատճառ դարձաւ որ նա հալածուի հրեաներու կողմէն եւ քրիստոնեայ կոչուող, սակայն կապաշտական արարքներով Աստուծոյ եկեղեցիին նախատինք եղող Նիկողայոսեանց կողմէն Գործ. ԺԳ. 45-50, ԺԴ. 18, ԺԷ. 5, 13, ԺԸ. 12, 13, Ա. Թեոս Բ. 14-16, Գ. Յովհ. 9-10:

Ամէն դարու մէջ ճշմարիտ, արթուն եւ սրբութեան փափաքովը լեցուն հաւատացեալներ կը հալածուին եւ պիտի հալածուին անուանական քրիստոնեաներու եւ կազմակերպութիւններու կողմէն, որոնց համար Տէրը կ'ըսէ Սատանայի ժողով հ. 9:

Տէրը գիտէ թէ եկեղեցին շատ բաներ պիտի կրէ, եւ զայն կը քաջալերէ «Բնաւ մի վախնար» խօսքովը: Յաղթական եկեղեցին կենաց պսակը պիտի ստանայ եւ երկրորդ մահէն պիտի չփնասուի Յայտ. Ի. 14, 15, ԻԱ. 8:

Հաւատքը կը յաղթէ Ա. Յովհ. Ե. 4, 5, Եբր. Ժ. 38, 39: Իրական հաւատքը երբեք չպարտուիր եւ երբեք ետ չքաշուիր: Անկեղծ հաւատքը մահը սիրով յանձն կ'առնէ Գործ. ԻԱ. 13: Տէր Յիսուս Քրիստոսի անուանը համար նախատուիլ, հալածուիլ եւ նահատակուիլ ճշմարիտ հաւատացեալին փափաքը եւ ուրախութիւնն է Գործ. Ե. 41:

Զմիւռնիա կը ցուցնէ հալածանքի այն շրջանը որ տեսց Յ. Տ. 100-313: Ընդհանուր հաւատացեալներու վրայ կը ճնշէր սարսափելի հալածանքը, քրիստոնեան որպէս ապօրինաւոր կրօնքի հետեւող, կը հալածուէր եւ կը տանջուէր:

Տէրը գիտէր թէ Իր սիրելի զաւակները այս

կրակի բովէն պիտի անցնէին, եւ պիտի փորձուէին: զանոնք կը քաջալերէ իր խօսքովը եւ կը զօրացնէ իր խոստումներովը:

Տէր Յիսուս իր գալստեան մասին չը խօսիր այս եկեղեցիին, Փիղատեղփիոյ խոստումն ալ չունին այս շրջանի հաւատացեալները: զլ. Գ. 10, այլ կը պահանջէ որ եկեղեցին մինչեւ ի մահ հաւատարիմ մնալով կենաց պսակը ժառանգէ:

Օրհնեալ ըլլայ Տէրը որ իր զօրութեամբ եւ շնորհքով ապրեցան այս շրջանի սուրբերը: Պատմութիւնը կը ցուցնէ թէ 10 կայսրեր քրիստոնէութեան յառաջացումը արգիլելու համար իրարու ետեւ հրովարտակներ հանելով չարչարեցին Աստուծոյ սիրելի զաւակները, որոնցմէ ոմանք այրուեցան, ուրիշներ վայրի գազաններու կեր եղան, ոմանք Քրիստոսի վկայութեան համար իրենց աչքը կորսնցուցին, իրենց ստացուածքէն, զաւակներէն եւ ընտանիքէն զրկուեցան անտանելի ցաւերու ենթարկուելով որոնց նկարագրութեան ընթերցումն իսկ սարսափ կ'ազդէ: Սակաւն անոնք ապրեցան, հաւատարիմ մընացին իրենց Փրկչին եւ Աստուծոյ խօսքին եւ կենաց պսակը ընդունեցին: Տասը օրնեղութիւն հ. 10 կը նշանակէ 10 կայսրերու իրարու յաջորդող արգելիչ օրէնքները, մանաւանդ վերջինը, Տիոդդէտիանոսի խիստ հալածանքը որ տեւեց 303-313: Եկեղեցական պատմութիւնը այս տարիները կը կոչէ Մարտիրոսաց շրջան, որ կը վերջանայ Միլանի հրովարտակով Յ. Տ. 313ին երբ Մեծն Կոստանդիանոս քրիստոնէութիւնը պաշտօնական կրօնք ճանչնալով վերջ կուտայ հալածանաց:

Բանասարկուն նոյն սարսափելի անձն է. այսօր ալ փորձութիւն կայ քեզի եւ ինծի համար, կայ նաեւ կենաց պսակը, զոր Տէրը զիսք սիրողներուն եւ մինչեւ ի մահ հաւատարիմ եղողներուն խոստացաւ Յակ. Ա. 12:

Տէրը օրհնէ եւ հաւատարիմ պահէ մեզ որ իր օրհնեալ ձեռքէն այս պսակը ընդունինք յայն օրը: Ամէն:

Մինչեւ ի մահ հաւատարիմ եղիր՝ ու քեզի կենաց պսակը պիտի տամ: Ան որ աւանջ ունի թող լսէ թէ Հոգին ինչ կ'ըսէ եկեղեցիներուն: Ան որ կը յաղթէ երկրորդ մահէն պիտի չվընասուի:

Վեր. Ա. Օ. ՓԱՓԱՋԵԱՆ

Փօնտ Օպէնաս



ԵՍ ԱԼ

Ով իմ անձս, օրհնէ Տէրը ու այն ամէնը որ իմ ներսիդիս է, Անոր սուրբ անունը: Ով իմ անձս, օրհնէ Տէրը, եւ Անոր բոլոր բարերարութիւնները մի մոռնար: Սաղ. ձԳ. 1, 2

Մօտաւորապէս 21-22 տարիներ ապերախտ ըլլալով չկրցայ միտք բերել իմ Տէրոջս Յիսուս Քրիստոսի ըրածը իմ անձիս: Խեղճ մեղաւորս թափառեցայ մեղքի ու անօրէնութեան ձորերու մէջ, ամենէն աղտոտ ու ամայի ճամբաներէ անցնելէ յետոյ, թէ ինչպէս եղաւ որ Տէրոջս ողորմութիւնը ճանչցայ, կ'ուզեմ եւ կը փափաքեմ համոռօտ կերպով պատմել:

Պրուսայի նահանգին Գարադան Եայլայի մէջ բողոքական ընտանիքի մը զաւակն եմ: Ծնողներս կը ջանային կրօնասիրութեան առաջնորդել զիս իրենց ապրածին համեմատ: Հակառակ անոնց բոլոր ջանքերուն, կ'ուզեմ խոստովանիլ թէ երբոր հազիւ 8-10 տարեկան էի. ամենէն շատ Աստուծոյ սիրտը կը վշտացնէի: Մեղքիս չափը կը լեցնէի, այնպէս որ հաստատ գիտէի թէ այն վայրկեանին որ աչքերս գոցէի, պիտի բանայի գեհենի կրակին մէջ: Այս բանը գիտնալով հանգերձ, փախուստի ճամբայ մը կը փնտռէի. կը ջանայի համոզել ինքզինքս, նայելու շուրջիններուն, որոնք ինծմէ աւելի լաւ չէին: Բայց ինչ որ ալ ըլլար, գիտէի որ մեղաւոր մըն եմ, ատոր համար կը դողայի մահէն: Կը փափաքէի եւ կը ջանայի աւելի լաւ ապրիլ, կ'ըսէի զուցէ Աստուած ողորմի: 2էի իմանար թէ Աստուած արդէն ողորմած է, եթէ ես ընդունիմ իր ողորմութիւնը: Կը ջանայի օրէնքի գործերով արդարանալ, բայց կը խորհէի թէ ինչ պիտի ըլլան հապա առաջուց գործած մեղքերս, զոր գործած եմ այսքան տարիներ յուսահատ, խեղճ թշուառական: Երբ տակաւին օրէ օր կ'իջնէի մեղքի եւ անօրէնութեան տիղմին մէջ, Աստուծոյ ողորմութիւնը հասաւ թուրքիոյ մէջ շատ տեղեր պտըտած եմ, Սուրիա, Յունաստան, ի վերջոյ Ֆրանսա: Հոս ալ քանի մը տեղեր փոխելէ վերջ, Մոնթէլիմար գացի 1927ին: Այստեղ կային եւ նաեւ ուրիշ տեղերէ ալ կուգային Վալանսէն, Փօնտ Օպէնասէն եղբայրներ եւ քոյրեր այցելութեան: Հիմա հոս չեմ ուզեր յիշել անունը այն եղբոր որ աւելի շատ միջոց եղաւ զիս փրկութեան առաջնորդելու, բայց երբ գայ Տէր Յիսուս, եւ կամ եթէ կանչէ զիս ու հասնիմ այն տեղ ուր յոյժ ու-

նիմ տեսնել այն սիրելի եղբայրս ալ, Տէր Յիսուսով փափաքս այս է որ երբ դարձեալ գանք մէկտեղ երկինքի մէջ երգենք բոլոր սուրբերուն հետ հետեւեալ երգը, «Վասնզի մորթուեցար ու մեզ ծախու առիւր Աստուծո՛ւ Բու արիւնովդ ամէն ցեղէ ու լեզուէ եւ ժողովուրդէ ու ազգէ»։ Հիմա ալ ունիմ երգ մը զոր կ'երգեմ, Սաղ. ՃԺԶ. 12-14 «Ի՞նչ հատուցանեմ Տէրոջը Անոր բոլոր ինծի ըրած բարութեանը փոխարէն։ Փրկութեան բաժակը պիտի առնեմ ու Տէրոջը անունը պիտի կանչեմ, իմ ուխտերս Տէրոջը պիտի հատուցանեմ իր բոլոր ժողովուրդին առջեւ։ Ու Հոգ. Երգարանէն 72րդ երգը։

Սիրելի ընթերցող, իմ գրածներս բարձր ոճով ու բարձր բաներ չեն եւ չեմ ուզեր որ ալ ըլլան, հապա «Այս խօսքը հաւատարիմ է ու բոլորովին ընդունելութեան արժանի, որ Քրիստոս Յիսուս աշխարհ եկաւ մեղաւորները փրկելու, որոնց զըլուխը ես եմ։ Բայց անոր համար ողորմութիւն գտայ որ ամենէն առաջ Յիսուս Քրիստոս իմ վերաս ցուցնէ բոլոր երկայնատուութիւնը օրինակ ըլլալու անոնց որոնք պիտի հաւատային իրեն յաւիտենական կեանքի համար։ Ա. Տիմ. Ա. 15-16։ Խօսքին հաւատացողի մը պարզ հաւատքն է։ Ինչպէ՛ս չուրախանամ եւ Աստուծոյ փառք եւ փառաբանութիւն չերգեմ երբ կը կարդամ հետեւեալը Ս. Գիրքէն «Մահը յաւիտեան բնաջինջ պիտի ընէ, ու Տէր Եհովա ամէն աչքէ արցունքը պիտի սրբէ, եւ բոլոր երկրի երեսէն իր ժողովուրդին նախատինքը պիտի վերցնէ, վասնզի Տէրը խօսեցաւ։ Ու այն օրը պիտի ըսեն (Ռուբէնն ալ միասին) ահա մեր Աստուածը (իմ Աստուածս) ասիկա է։ Անոր յուսացանք (Ռուբէնն ալ յուսաց) ու Անիկա մեզ ազատեց (զիս ազատեց), Տէրը աօրկա է, Անոր յուսացանք (իմ յոյսս), Անոր փրկութիւնովը պիտի ցնծանք եւ ուրախանանք (Ռուբէնն ալ պիտի ցնծայ եւ ուրախանայ) Եսայ. ԻԵ. 8, 9։ Ես կ'ուզեմ երգել այս երգը բոլոր անոնց հետ որ կ'ուզեն հաւատքով ընդունիլ Յիսուս Քրիստոսը Տէր ու Փրկիչ եւ կեանք զըտնել բոլոր անոնց հետ որ կ'ընդունին այսպէս ուր որ հանդիպին ամէն ազգէ, ամէն լեզուէ եղբայր եւ քոյրերու, նոյնպէս ալ պիտի երգեմ դարեր անվախճան յաւիտենականութեան մէջ։

Հիմա կ'ուզեմ պատմել թէ այս սիրելի եղբայրը ինչպէս քաղցրութեամբ խօսեցաւ մինչև որ կըցայ անձամբ սորվիլ ճշմարտութիւնը։ Նախ առաջին անգամ հարցւց թէ ապաշխարա՞ծ ես. եւ շուտով գիտցաւ թէ լոյս չունիմ, ալ ոչ մէկ

խօսք ըրաւ, սկսաւ Ս. Գիրքէն հետեւեալ նիւթը սերտել։—

1. Թէ «Աստուած արդար դատաւոր է» Սաղ. Է. 11։ «Այն անձը որ մեղք կը գործէ, անիկա պիտի մեռնի» Եզեկ. ԺԸ. 20։ Ուրեմն քանի որ մեղաւոր մըն ես, պիտի մեռնիս։ «Բանգի մեղաց վարձքը մահ է» Հոով. 2. 23։

2. Թէ «Արդար մը չկայ, ոչ մէկ հատ, ինչու որ ամէնքը մեղք գործեցին եւ Աստուծոյ փառքէն պակասած են» Հոով. Գ. 10, 23։

3. «Ինչու որ Անոր առջեւ մէկ մարմին մը պիտի չարդարանայ օրէնքին գործերովը» Հոով. Գ. 20։

Երբոր շարաթէ շարաթ այս նիւթերը կը ներկայացնէր, ես կը խորհէի, եթէ ըսեմ Աստուած իր խօսքին տէրը չէ, չեմ կրնար ըսել, իսկ եթէ ըսեմ ես արդար եմ, զիտէի որ մեղաւոր եմ, քանի որ օրէնքին գործերով ալ չեմ կրնար արդարանալ։ Ի՞նչ ըսեմ, բոլորովին յուսահատ ամէն կողմէ սկսայ տանջուիլ։ 1927 Սեպտ. 19ին երբ Փօստ Օպէնասէն եւ Վալանսէն եղբայրներ եւ քոյրեր եկած էին, այդ օրը Եսայ. ԾԳ. զըլուխը նիւթ եղաւ։ Աստուծոյ ողորմութիւնը ինձ ալ հասաւ։ Հաւատքով տեսայ խաչեալ Քրիստոսը իմ մեծ քիս պատիժը իր վրայ առած։ Նա սիրով կը հրաւիրէր որ ձրի փրկութիւնը ընդունիմ Հո. 2. 23։ Ելայ եւ խոստովանեցայ թէ մեղաւոր մըն եմ եւ խնդրեցի որ ներէ ինծի, այսպէս հաւատքով մեղքերս ձգեցի խաչին առջեւ։ Այն օրէն ի վեր հաւատքով կը վայելեմ փրկութեան ցնծութիւնը, Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքովը եւ Ս. Հոգւոյն օգնութեամբ։ Ալ այն օրէն ի վեր երբեք իմ ջանքովս մեղքին ազդեցութենէն ազատիլ չեմ փորձած։ Մինչեւ այն օրը կը ջանայի եւ չէի կրնար մեղքին ձեռքէն ազատիլ։ Գոհութիւն Աստուծոյ Տէր Յիսուս Քրիստոսի անունովը որ այն օրէն ի վեր մեղքին հանդէպ ատելութեան հոգի մը դրած է իմ մէջս։ Հիմա այլեւս կը խորհիմ թէ ի՞նչ ըսեմ որ իմ Տէրս ուրախանայ։ Ես կը հաւատամ եւ փորձառաբար գիտեմ որ այն օրուրնէ Տէրը զիս ազատեց չարին իշխանութենէն, մեղքը ատելու գործութիւնը իմ մէջս դրաւ, նաեւ Ս. Գրքին սերտողութեան սէրը։ Ես ալ անոնցմէ եմ որոնք կը սպասեն Տէր Յիսուս Քրիստոսի գալստեան։ Հոգիս կը տանջուի դիտելով եւ լսելով մեղքը ու մարդոց որդիներուն ապստամբութիւնը առ Աստուած։ Կը փնտեմ հաւատացեալներ, որոնք կ'ուզեն ձեռք ձեռքի տուած աղօթել մինչեւ որ երկինքէն օգնութիւն տեղայ։ Ընթերցող, եթէ տակաւին չես



ՆՈՅԵՄԻՆ ԵՒ ԻՐ ՀԱՐՍՆԵՐԸ

(Հոռութ. Ա. 1-18)

Մովաբի եւ Քանանու սահմանագլուխը կեցած են երեք կիներ. երեքն ալ որբեւարի, իրարու հետ կապուած ներքին կապով մը, սրտերնին վիրաւոր կսկիծով եւ ցաւով լեցուած: Դիպուածի մը արդիւնք չէ որ այդ տեղը մէկգմէկու հանդիպած ըլլան: Նոյն յարկին ներքեւ շատ մը տարիներ միասին ապրած, թէ՛ ուրախութիւն եւ թէ տրտմութիւն միատեղ ճաշակած, ունեցած են իրենց լաւ եւ երջանիկ օրերը, նոյնպէս ալ իրենց տրտմութեան եւ թախիծի օրերը: Երեքն ալ նոյն ցաւ ու կսկիծը կը կրեն իրենց կուրծքին ներքեւը: Հարս ու կեսուր են: Իրենց յարաբերութիւնները բոլորովին նկատողութեան արժանի են. մէկգմէկու հետ կապուած են անկեղծ եւ ճշմարիտ սիրով, թէեւ խեղճ ու թշուառ եւ անօգնական, սակայն հարուստ են սիրով եւ սրտով, իրենց ընտանեկան բոյնը հիմնուած էր սիրոյ եւ աստուածապաշտութեան վրայ, իւրաքանչիւրը իր երջանկութիւնը միւսին երջանկութեան մէջ կը փնտռէր:

Նոյեմի ազնիւ եւ պատուական կին մըն էր, կեսուր մըն էր որ կրցած էր իր երկու հարսներուն սիրտը զրաւել եւ իրենին հետ կապել, իր աստուածապաշտութեան: Նա կ'ապրէր զործնական կեանք մը, որ մեծ ազդեցութիւն թողած էր անոնց վրայ: Երբոր ուզեց օտարութիւնը թողուլ եւ հայրենիք վերադառնալ, իրեն հետեւեցան եւ բաժնուիլ չուզեցին ատանկ կեսուրէ մը, եւ անոր հետ երկրին սահմանագլուխը կեցած են:

Աչքերին վերցուցած դէպի ետ եւ դէպի առաջ կը նային, ետեւը Մովաբի երկիր, իսկ առ-

ջեւը Քանանը: Երեքն ալ կուլան, դառն արցունքներ կը թափեն, որովհետեւ իրենց ետեւ Մովաբի երկրին մէջ թողուցածներ ունին, Նոյեմին հոն թողուց իր ամուսնոյն եւ երկու տղոց շիրիմները, հարսները հոն թողուցին իրենց ամուսիններուն շիրիմները, բարեկամներ, ազգականներ եւ հօրենական տուն. ուստի կուլան:

Վերջապէս կեսուրնին լռութիւնը խզելով կ'ըսէ, «Ետ դարձէք, իւրաքանչիւրդ թող իր հօրը տունը երթայ»: Ահա վճռական ժամը հասած է սահմանագլուխին վրայ, ընտրութեան մը առջեւ կը գտնուին անոնք. կամ Մովաբի երկիր, կամ Քանան, կամ Իսրայէլի ճշմարիտ Աստուած կամ թէ Մովաբի կուրքեր: Հարսները կը փափաքին իրեն հետ գալ, բայց անիկա «Ետ դարձէք»ով կը փափաքի անոնց հասկցնել թէ անոնք ռեւէ նիւթական ակնկալութիւն մը պէտք չէր ունենային: Հարսներէն մէկը, Որփան, կը համբուրէ կեսուրը: Այդ համբուրը թէ՛ վերջինը եւ թէ բաժանման համար էր: Կեսուրին խօսքերը եւ ճամբու դժուարութիւնները աչքի առջեւ ունենալով, ետ դարձաւ արցունքոտ աչքերով եւ տրտում՝ հարուստ պատանիին նման, որովհետեւ Քանանու երկիրը չպիտի տար իրեն այն բանը զոր Մովաբի երկիրը, իր հայրենիքը կրնար պարգեւել: Մաս մը ճամբայ երթալով առանց շարունակելութեան մէջ վերջացուց: Լոյսին կոնակ դարձուց, դէպի ետ, դէպի մեղք, դէպի կոապաշտութիւն, թէեւ անխօս:

Այսօր, շատեր կը նմանին Որփային, լաւ կերպով կ'սկսին իրենց ճամբան, բայց կէս ճամբայէն ետ կը դառնան: Աշխարհ լեցուն է այդպիսի մարդոցով, որոնք թէեւ կը շարունակեն իրենց ճամբան դէպի Քանան, սակայն մեղք մը կը պահեն իբր սիրելի բան մը, ամուր կը բռնեն զայն, անոր սիրոյն համար ետ կը դառնան, չեն ուզեր անկէ զատուիլ եւ անոր միջոցաւ ալ կը կորուստին: Դուռն, ով մարդ, տուր սիրտդ ամբողջութեամբ Յիսուսին, խզէ յարաբերութիւնդ մեղքի աշխարհին հետ, եթէ ոչ Որփա մը կ'ըլլաս: Պէտք է որ իրեն հետեւիս, եւ ոչ թէ հետեւէն նայիս: Ով որ ձեռքը մածին վրայ կը դնէ ու ետին կը նայի, Աստուծոյ թաքաւորութեանը յարմար չէ (Լուկ. Թ. 62): Աստուծոյ թաքաւորութիւնը լման եւ կատարեալ մարդոց պէտք սւնի:

Նոյեմի արիւնտ սրտով կ'ըսէ միւս հարսին, «Ներդ ետ դարձաւ, իր ժողովուրդին, իր աստուածներուն, դուռն ալ անոր հետեւէ»: Իսկ Հոռութ կ'ըսէ, «Իմ վրաս մի իյնար որ քեզ թողում ու քեզմէ հեռանամ, ուր որ երթաս հոն պիտի եր-

փորձած, խնդրեմ ու կ'աղաչեմ որ փորձես ու զիտնաս փրկութեան ցնծութիւնը վայելելուն քաղցրութիւնը: Իսկ թէ որ հաւատացեալ մըն ես, Յարուցեալ Տէր Յիսուս Քրիստոսի սիրովը բարեւներս, մինչեւ որ մէկտեղ ժողովուրդը բոլոր սուրբերուն հետ մէկտեղ երկնից մէջ:

ՌՈՒԲԷՆ ԲԱՆԻՋԵԱՆ

Փօստ Օպէնաս



ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴԱՍԵՐՈՒ

ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

ՍԵՊՏ. 6.—

ՀԵԹԱՆՈՍՆԵՐՈՒ ԸՆԴՈՒՆՈՒԻԼԸ

Դաս Գ. Առաք. ԺԴ. 7, 15, 19, 20, Հոով. Ժ. 8-13:

Տէր Յիսուս Քրիստոսի մահովը եւ յարութիւնովը կատարուած փրկութիւնը մեծ փրկութիւն մըն է: «Եւ ուրիշ մէկով փրկութիւն չկայ»: Աստուած թէեւ «անցած դարերուն մէջ թող տուաւ ամէն ազգերուն իրենց ճամբաները երթալու» (Հ. 15), բայց Դ. Առաք. դէպքերէն կրնանք հետեւցնել թէ՛ մինչ հրեայ ազգը շփացած էր եւ կարծես իր Աստուծոյն ձանձրացած (Տես Զաք. Է. 11-13), հեթանոսներն ալ կարծես իրենց ունայն կուռքերէն ձանձրացած էին եւ խարխափելով ճշմարիտ Աստուծոյն կը փնտռէին:

Թամ, եւ ուր որ մնաս հոն պիտի մնամ, քու ժողովուրդդ իմ ժողովուրդս ըլլայ, ու քու Աստուածը իմ Աստուածս ըլլայ, ուր որ մեռնիս ես ալ հոն մեռնիմ ու թաղուիմ, Տէրը կենդանի է որ միայն մահը կրնայ զիս քեզմէ բաժնել (Հոով. Ա. 16-17): Թէեւ ճամբան փշոտ, նեղութեամբ եւ թշուառութեամբ լեցուն, ապագան մութ, բնաւ չգատուեցաւ իր կեսուրէն, քանզի անոր շնորհիւ գտած էր փրկութեան ճամբան եւ ձեռքէ փախցնել չէր ուզեր իր մխիթարութիւնն ու սփոփանքը զոր գտած էր Իսրայէլի Աստուծոյն մէջ: Անոր սիրոյն համար ամէն բան յանձն առած, մինչեւ իր մահը հաւատարիմ մնալ կ'ուզէր: Հրով որոշած էր Աստուծոյ կամքին համաձայն ապրիլ, իր կեանքը նուիրելով իր ճամբան շարունակել Աստուծոյ առաջնորդութեամբ: Երանի անոնց, որոնք Յիսուսի կը հետեւին մինչեւ վերջը հաւատարիմ մնալով եւ իրենց յարաբերութիւնը խզած աշխարհի եւ մեղքի հետ, կ'ապրին Քրիստոսի հետ: Այսպիսիներուն բաժինը պիտի ըլլայ այն հարուստ բաժինը, զոր պիտի ընդունին իրենց երկնային Բոոսի, Յիսուս Քրիստոսի քով եւ Անոր ներկայութեան:

(Վեր.) Յ. ԵՂԻԱՋԱՐԵԱՆ

Գալալա

Մեր դասին մէջ փրկութեան եւ բժշկութեան առարկան եղող Հիւստրացի կաղը՝ Ինչպէս նաեւ Հիւստրացի ժողովուրդը կրնան իբր օրինակ ծառայել այն ատենի ընդհանուր հեթանոսաց:

1. Այս մարդը ի ծնէ կաղ էր: Իր կաղութիւնն էր ոտքերու տկարութիւն: Ոտքեր ունէր թէեւ, բայց անոնք կարող չէին իր մարմնին ծանրութիւնը կրել: Անոնք փուռ ոտքեր էին: Այսպէս էին նաեւ անոնց կուռքերը եւ կրօնքները: Ամէն ազգ իրեն կրօնքը եւ կուռքերը ունէր:

2. «Ասիկա Պօղոսի խօսքերը մտիկ կ'ընէր...»: Եթէ հարկ ըլլար ներկայ եկեղեցւոյ հաւատացեալներէն շատերուն մէկ նկարը գծել, կարծեմ թէ հրէշային պատկեր մը պիտի ըլլար ան: Հսկայ գլուխներ պէտք էր դնել գաճաճ մարմիններու վրայ, վասնզի ամէնն ալ կը կարծես թէ շատ բան գիտեն եւ շատ լաւ կը տրամաբանեն, մինչդեռ շատեր չեն ուզեր իրենց մարմինն միւս անդամները Տէրոյն սպասաւորութեան դործածել: Այդ հսկայ դէմքերուն վրայ հարկ պիտի ըլլար դնել, շատ պզտիկ, զրեթէ անտեսանելի ականջներ, բայց հսկայ բերան մը եւ անոր մէջ շատ խոշոր ակոսներ ու մանաւանդ հսկայ լեզու մը, վասնզի հնազանդութեան համար մտիկ ընող ականջներ չկան, բայց շատ լեզու ու խօսք կայ ու նաեւ շատ իրար խածնելներ եւ ուտելներ (Գաղ. Ե. 15): Ճշմարիտ, հոգեւոր, հնազանդ, Տէրը սիրող հաւատացեալին կեանքը Յիսուս կ'ամփոփէ Յովհ. Ժ. 27-ի մէջ:

ՍԵՊՏ. 13.—

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԽՈՐՀՐԴՅԱՆՈՒԹՅԱՆ

Դաս Գ. Առաք. ԺԵ. 22-29, Գաղ. Բ. 1, 2, 9, 10:

Երուսաղէմի խորհրդաժողովը Ս. Հոգիին առաջնորդութեամբ վերջնականապէս «Տէր Յիսուսի շնորհքովը եղած փրկութիւնը» Մովսիսական օրէնքով արդարանալու ջանքերէն գերազանց դրաւ. ոչ թէ միայն գերազանց, հապա օրէնքով արդարանալը անկարելի եւ միայն շնորհքով արդարանալը կարելի հռչակեց: Բայց անկէ յետոյ ու մինչեւ մեր օրերն իսկ՝ հաւատացեալները խոռովեցնելու եւ խախտելու ջանացողներ կան:

Հաւատացեալը ազատ է օրէնքին թէ անէ՞քէն եւ թէ զօրութեան Գաղ. Գ. 13, Դ. 5-7: Հաւատացեալը Քրիստոսով օրէնքին մեռած եւ անկէ ազատուած ըլլալով՝ այլեւս օրէնքին տակ չէ հապա շնորհքի Հոով. 2. 14, Է. 4, Գաղ. Բ. 19, Դ. 4-7, Ա. Տիմ. Ա. 8, 9: Օրէնքը չէ հաւատացեալին կեանքի կանոնը: Նա Քրիստոսի մէջ նոր ստեղծուած մըն է: Ասիկա կ'առաջնորդուի Սուրբ

Հոգիէն, սիրոյ եւ ազատութեան օրէնքով, անոր սրտին մէջ աստուածային օրէնքը գրուած է, եւ նա այդ օրէնքէն կ'զմայլի, նոյնիսկ այդ սէրը զինք կ'ստիպէ: Նա կ'ապրի նոր, հոգեւոր կեանքի օրէնքով որ բոլորովին տարբեր է Մովսիսական օրէնքէն: Բ. Կոր. Ե. 17, Գաղ. Բ. 20, Ե. 17, Հռով. Ը. 2-4, Գաղ. Ե. 16-18, Եբր. Ժ. 16, Ա. Կոր. Թ. 21, Գաղ. Զ. 2, Բ. Պետ. Ա. 5-7, Բ. Կոր. Ե. 14:

Շնորհքը, Աստուծոյ առատ, ձրի, փրկարար, ճոխ շնորհքը ճանչնալու, անոր մէջ ապրելու հմր. հարկ է նոր Կտակարանը ծայրէ ի ծայր եւ բառ առ բառ աղօթքով, տարիներ ամբողջ կրկին եւ կրկին ու կրկին սերտել, ու տակաւին շատ քիչ բան գիտցած պիտի ըլլանք այն շնորհքէն որ խաչին վրայ մեզի յայտնուեցաւ եւ որ յաւիտեանականութեան պիտի բաւէ:

ՍԵՊՏ. 20.—

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ

Դաս Հռով. ԺԲ. 1-3, 9-21

Հմր. 1. «Ձեր մարմինները ընծայէք»: Զբաւեւ ըսել «հոգիս փրկուած է»: Աստուած մարմինն ալ կ'ուզէ: Երբ Սատանայի որդիներ էինք, Սատանան միայն մեր հոգիները չէ, հապա նաեւ մեր մարմիններն ալ կը գործածէր իբր «մեղքի գործիքներ»: Հիմա ալ Աստուած ոչ միայն մեր հոգիները, հապա նաեւ մեր մարմիններն ալ կ'ուզէ «արդարութեան գործիքներ» ըլլալու:

«Ձեր բանաւոր պաշտօնը»: Ուրիշ թարգմանութիւններ (օր. թուրքերէնը) կ'ըսեն «ձեր հոգեւոր պաշտամունքը»: Պաշտելը ծառայել է, եւ ամենէն բանաւոր պաշտամունքը հոգեւորն է: Մեր օրերուն շատ պաշտամունքներ կան, զրամ, կուռքեր, մարդիկ, վարդապետութիւններ, իտէալներ, պատկերներ, նշխարներ, մեռած փտած շնձերու կամ առարկաներու արձաններ, զեղեցկութիւն կը պաշտուին եւ թերեւս ինչ որ ամենէն գէշն է ինքնապաշտութիւնը: Բայց որքա՛ն քիչ հոգեւոր պաշտամունք կայ, Աստուծոյ հաճելի:

հ. 2. «Այս աշխարհի կերպարանքովը... ձեր մտքին նորոգութիւնովը»: «Նորոգուեցէք» ի հրամանը նոյնքան հրամայական է որքան «մի կերպարանիքը»: Մենք յաճախ մեր սրբութեան համար ժխտական քայլեր միայն կ'առնենք: Ասիկա Մովսիսական օրէնքի տեսակն է, շնորհքի օրէնքը զրական է: Հաւատացեալ մը որ միշտ ուրիշ հաւատացեալները քննադատելու մոլութիւնը ունէր, յանդիմանուած ատեն կ'ըսէր «Ես այլեւս մէկուն չպիտի խառնուիմ»: Այս եղբայրը

միայն ժխտական որոշում մը կուտար. ասոր տեղ պէտք էր ըսել, «Ես այլեւս մէկուն չպիտի խառնուիմ քննադատելու հապա միայն սիրելու եւ ծառայելու»: Զարմանալի չէ որ այս եղբայրը հակառակ իր կրկնակի ժխտական որոշումներուն՝ միշտ ալ կրկին իր առաջուան յանցանքին մէջ կ'իյնար:

հ. 3. «Ինչպէս Աստուած ամէն մէկուն բաժնեց հաւատքին չափը»: Ասոր յաջորդող համարներուն մէջ կը տեսնենք թէ հաւատացեալներէն իւրաքանչիւրին մօտ արժէք ներկայացուցածը անոր ստացած պարգեւին տեսակը չէ, հապա իւրաքանչիւրին կողմէ իր ստացած պարգեւին գործածելու կերպը:

հ. 9-21ի մէջ քրիստոնէական նուիրուած, հոգեւոր ապրելակերպի 25 յատկանիշներու վրայ շեշտուած է կեանքի ամէն կողմերուն համար: Նկատելու է թէ անոնց ամենուն զուլխը գրուած է սէրը (հ. 9): Այս առաջին կէտը անտեսել եւ միւս կէտերէն մէկը կամ միւսը ի գործ դնելու ջանալ պիտի նմանէր վայրի ծառի մը վրայ պտուղներ կամ անուշահոտ եւ զեղեցիկ ծաղիկներ կախել՝ առանց ծառին վայրի բնութիւնը պատուաստելու: Սէրը ալ պատուաստն է որ ծառին մէջ ներգործելով բնական կերպով միւս պտուղները երեւան կը բերէ, փոխանակ միայն արտաքին ցուցադրական զարդարանքի մը որ շատ վաղանցիկ է:

հ. 9. Սիրոյ անկեղծութիւնը:

հ. 10. Սիրոյ գորովը եւ անձնագոհութիւնը:

հ. 13. Սիրոյ առատաձեռնութիւնը:

հ. 15. Սիրոյ համակրութիւնը:

հ. 16. Սիրոյ միութիւնը եւ խոնարհութիւնը:

հ. 17-21, Սիրոյ ներողութիւնը:

(Տեղի անձկութեան պատճառաւ եւ եռամսեայ քաղուած ըլլալուն համար Սեպտ. 27ի կիրակին զանց կ'առնենք զհետեղել: Դասին ընդհանուր նիւթ տրուած է «Քրիստոնէութեան տարա. ծումը արեւմտեան Ասիոյ մէջ», եւ խորհրդածութեանց հատուածն է Մատթ. ԺԳ. 24-33: Աւելի յարմար եւ օգտակար կ'ըլլայ դասերու կապակցութիւնը հասկնալու համար եռամսեայ դասերը կարգաւ իրարու ետեւէ: Այսպէսով պիտի կրնանք կատարել նաեւ ամէնէն պատշաճ քաղուածքը):

Հետեւողութեամբ

Վ. Ս.

ԸՆՏԱՆԵԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՄԷՋ

.....

ԸՆՏԱՆԻՔԻՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԻՐԱՐՈՒ ԿԱՊՈՂ
ԿԱՊԵՐ

Օրհնեալ ազգեցութիւն մը պէտք է գործ-
ուի ընտանեկան աղօթքով (ընտանեօք, Աստու-
ծոյ խօսքին ընթերցումով եւ աղօթքով):

Ամէն քրիստոնեայ տուն պէտք է ընտանե-
կան աղօթք ունենայ: Կանուխէն, զաւակը պէտք
է տեսնէ որ հայրը յարգանքով կը բանայ զիրք
մը, որուն արժէքը ամէն ուրիշներէն զերազաս է
— Ս. Գրքը: Հոս հայրը մասնաւոր պարտակա-
նութիւն մը ունի. պէտք է ընտրէ այն հատուած-
ները որ մանուկներու համար հետաքրքրական
են. նահապետներուն կեանքին անմոռանալի
պատմութիւնները. Յովսէփի, Դաւիթի, Դանիէլի,
Յիսուսի կեանքին եւ Ասոր մահուան պատմու-
թիւնները: Այս հատուածները այնքան կենդա-
նի կերպով մը մատաղ հոգին պիտի դնեն Աս-
տուծոյ պահանջներուն, մեղքի հետեանքներուն,
Փրկչին սիրոյն դիմաց, որ սիրել պիտի տան Ս.
Գրքը եւ Փրկիչը: Անոնք որ առանձնաշնորհու-
մը ունեցած են, ինչպէս Պօղոս առաքեալ Տի-
մոթէոսի համար կ'ըսէ, իրենց մանկութենէն Ս.
Գրքերը գիտնալու, չեն գիտեր թէ անոր ինչե՛ր
կը պարտին: Եթէ դուք ունեցած չէք այս ա-
ռանձնաշնորհը, կրնաք ձեր զաւակներուն հայ-
թայթել. պէտք է ասիկա ընէք: Երբ ձեր զա-
ւակները տեսնեն որ դուք կ'աղօթէք, կրնաք ա-
նոնց աղօթել սորվեցնել: Մայրե՛ր, ամենէն ա-
ւելի դուք զայն կրնաք ընել: Ինչպիսի՜ առանձ-
նաշնորհ մըն է կարենալ ձեր զաւակներուն սոր-
վեցնել, երբ դեռ ծննկերնուդ վրայ են, ձեռքեր-
նին միացնել եւ խորհուրդներնին ու սրտերնին
առ Աստուած բարձրացնել: Սորվեցուցէք ասի-
կա երբ դեռ պզտիկ են, շատ պզտիկ: Մասնա-
ւոր ժամանակ մը կայ ասոր համար: Բայց թե-
րեւ մանկութիւնը ամենէն հարուստ սերմանի-
քի ժամանակն է ձեր զաւակներուն սրտին մէջ:
Անոնք իրենց հետ պիտի տանին այս ընտանե-
կան յիշատակները, որպէս շատ քաղցր զօրու-
թիւն մը որ զիրենք չարէն պիտի պահէ: Ձեր
զաւակներուն նաեւ երգել սորվեցուցէք, մայրե-
րէն կրկնուած երգերը անմոռանալի են: Ահա

պզտիկ պատմութիւն մը, քրիստոնեայ մեծ եր-
գիչին, Սէնքիի վրայ:

1874ին ամառնային գեղեցիկ լուսնիլոյս գի-
շեր մը Սէնքի կը գտնուէր շոգեկառքի մը մէջ
որ դէպի Փօթօմաք կ'երթար: Ճամբորդները ի-
րեն կը թախանձէին որ երգէ:

— Բայց ես միայն հոգեւոր երգեր գիտեմ:

— Աղէկ, հոգեւոր երգ մը, եթէ կը հաճիք:

Սէնքի կը կոթնի մեծ ծխնելոյզին եւ կը սկսի
երգն, «Յիսուս իմ վէմս» երգը: Հազիւ թէ վեր-
ջին համարը լրացած, քիչ մը աւագակի երե-
ւոյթ ունեցող մարդ մը կը մօտենայ եւ անձ-
կալից ձայնով մը անոր կ'ըսէ,

— Գերիներու ազատութեան պատերազմին
մէջ ծառայած էք:

— Այո:

1864ին այսինչ զօրագունդին մէջ էիք:

— Այո, ի՞նչ կայ:

— Սպասեցէք, ջանացէք վերյիշել: Ասոր նը-
ման գեղեցիկ լուսնիլոյս գիշեր մը յառաջապահ
գունդի մը մէջ որպէս պահակ մինա՞կ էիք:

— Այո, ատիկա շատ լաւ կը յիշեմ:

— Իսկ ես ալ աւելի պատճառ ունիմ զայն
յիշելու: Ես ալ ձեր դիմաց յառաջապահ գունդին
մէջ էի, բայց թշնամի բանակին մէջ: Ինծմէ 200
մէթր հեռու մարդ մը տեսայ որ լուսինը լաւ մը
լուսաւորած էր, «Ա՛հ, մանչուկս, ըսի ինքնիշխան
հրացանս լեցնելով, հիմա քեզ կամացուկ մը կը
ղրկեմ»: Այն վայրկեանին ուր նշան կ'առնէի, մէ-
կէն մարդը սկսաւ երգել: Ես երաժշտութիւնը կը
սիրէի, եւ որովհետեւ այդ թշնամին գեղեցիկ
ձայն մը ունէր, ինքնիշխանս ըսի, «Ձայն մէկ եր-
կու վայրկեան եւս թող տանք որ ապրի»: Բայց
ահա քիչ մը աւելի բարձրաձայն կը սկսէր
երգել եւ ես որոշապէս կը լսէի «Յիսուս եղի՛ր
իմ վէմս» երգին երկրորդ համարին խօսքերը:—

Յիսուս կեցած եմ Բու քով,

Անձածկոյթ եւ անպաշտպան,

Բայց որդիդ իր հաւատքով

Ունի զօրութիւնդ պաշտպան:

«Այն ատեն տակն ու վրայ եղայ. ատիկա
այն երգն էր որ ատենօք մայրս, բարեպաշտ
կին մը, ինծի կ'երգէր: Ինծի այնպէս կը թուէր
թէ մայրս հոն քովս կեցած, ճակատս կը համ-
բուրէր եւ զիս կ'արգիլէր փնասել այդ թշնամի
երիտասարդ քրիստոնեային: Յետոյ միտքս խոր-
հուրդ մը եկաւ, «Այդ Յիսուսը պէտք է ամենա-
կարող ըլլայ այս մարդը կարենալ ազատելու
համար», վասնզի հիմա նոյնիսկ սպայ մըն ալ

ըլլար հրամայողը, ինծի անկարելի էր անոր վրայ կրակ ընել: Այս գիշեր ձեր նոյն երգին կրկնելը լսելով, նոյնպիսի գեղեցիկ գիշերունան մը մէջ, տեսէք սիրտս փշրուած է: Շատ կանուխէն որք մնացած եմ եւ ապրած եմ ինկած կեանք մը. ո՛հ, Պարոն, օգնեցէք ինծի զտնելու այդ Յիսուսը որ երկրորդ անգամ ձեզ իմ առջեւ կը դնէ, զիս չարութիւն գործելէ արգելելու համար:

Ունկնդիրներու շրջանակը շատ յուզուած էր, իսկ Սէնքի ալ աւելի: Անկարող ըլլալով մէկ բառ արտասանելու, ան յառաջացաւ բազկատարած դէպի իր խօսակիցը որ իր գիրկը նետուեցաւ լալով: Այդ երգը որ երիտասարդ քրիստոնեային կեանքը ազատած էր, հիմա ալ անառակ որդիի մը ապաշխարութեան պատճառ կ'ըլլար:

Ուստի այս բանը մտքերնիս պահենք թէ այն ազդեցութիւնը որ մենք կը ստեղծենք եւ ի գործ կը դնենք ընտանիքին մէջ, աւելի կարեւոր է քան ընտանեկան կանոնները: Հսկենք ինքզինքնուս վրայ, հսկենք մեր բնաւորութեան վրայ:

Տիկին Սթալ իրաւամբ է որ ըսած է, «Երբ մինակ ես, հսկէ խորհուրդներուդ վրայ, երբ ընտանիքի մէջ ես, հսկէ բնաւորութեանդ վրայ, երբ ընկերական շրջանակի մէջ ես, հսկէ լեզուիդ վրայ»:

Ուրեմն որքա՛ն կարեւոր է մեր քրիստոնէական վկայութիւնը ընտանիքին մէջ: Պատրաստենք սերունդ մը, որ թերեւս մերինէն աւելի դժուար ժամանակներ պիտի տեսնէ. ձեռակերպենք անմահ հոգիները: Տէրը օգնէ մեզի: Իրեն երթանք որ ինք ներէ մեր յանցանքները, մեր ծանր յանցանքները, թէեւ յաճախ անգիտակցաբար գործուած: Իրմէ խնդրենք որ մեզի օգնէ սեր պատասխանատուութեանց բեռը կրելու:

Կը աւանդենք թէ որքան անհրաժեշտ է ամբողջութեամբ Աստուծոյ նուիրուիլ եւ քալել շարունակ իրեն հետ հաղորդակցութեան մէջ ըլլալով: Հաւատարիմ ըլլանք եւ վստահութիւն ունենանք: Ինք կրնայ մեզ կարող ընել մեր մեծ գործը կատարելու համար եւ մեզ իրեն գործակից ընելու: Ինք պիտի ընէ, ինչ որ մենք չենք կրնար ընել: Հին պատկեր մը կայ որ կը ցուցնէ մայր մը շա՛տ յոգնած եւ գործը կիսկատար թողած իր մանոցին վրայ քնացած: Մինչդեռ քանի որ ինք կը քնանայ, հրեշտակներ եկած են եւ իր գործը կը լրացնեն: Հաւատարիմ ըլլանք, հաւատարմութեամբ ցանուած սերները չեն կըրնար կորսուիլ. չարէն տարուած հաղարաւոր մարդիկ եւ կիներ ետ եկած են ընտանեկան յիշատակներու ազդեցութեամբ: Ուրիշ շատեր ալ բա-

ՊԱՏԱՆԵԱՅ

ՓՈՔՐԻԿ ԱՂԶԿԱՆ ՄԸ

ՓԱՓԱՔԸ



Ջարուհի տասը տարեկան աղջիկ մըն էր: Ծընողքը բարի մարդիկ էին, մանաւանդ մայրը, քրիստոնեայ կին մըն էր: Սակայն հայրը Յիսուսի չէր հաւատար եւ չէր ալ ուզեր որ Ջարուհին փոքր տարիքէն սկսեալ Յիսուսի մասին սորվեցնէր մայրիկը: Ուրեմն աղջնակը մինչեւ իր այդ տարիքը շատ բան չէր գիտեր Փրկչին վերայով: Միայն թէ տիկին Վարդուհի (մայրը)

բոյական ազդեցութենէ պահուած են նոյն յիշատակներու ազդեցութեամբ: Սակայն ինչ որ ալ ըլլայ, հաւատացեալ ծնողքներուն կը մնայ բարեխօսական աղօթքը: Թերեւս գիտէք Տօք. Փասի նկարած այն պատկերը որ կը ներկայացնէ աջ կողմը մայր մը, որ կ'աղօթէ, իսկ ձախ կողմը որդին որ դէպի անդունդ կը յառաջանայ. սակայն բռնուած իր մօրը կապող չուանով, անոր աղօթքով:

Կրնայ պատահիլ որ մեր անհաւատարմութեան պատճառաւ, կամ հակառակ մեր հաւատարմութեան զաւակ մը կը մոլորի, Տէրոջմէ կը հեռանայ, ի՞նչ ընելու է: Աստուծոյ սպասելու է: Ի՞նչ ըրաւ անառակ որդիին հայրը, երբ ան իրեն ըսաւ, «Բու ստացուածքէդ ինծի իյնալու բաժինը տուր ինծի»: Հայրը զայն թողուց որ երթայ: Պէտք չէ՛ր որ զայն բանտարկէր, ծեծէր: Թողուց որ երթայ, սակայն վստահ եմ թէ օր չանցաւ որ հայրը ջերմեռանդ աղօթքներ չբարձրացնէր առ Աստուած իր որդւոյն համար: Կատարեալ կերպով հաւատաց եւ որդւոյն զղջմամբ ետ գալը տեսաւ:

Միասին աղօթեցէք, հայրե՛ր եւ մայրե՛ր, ձեր բեռերը եւ աշխատանքը, ինչպէս նաեւ ձեր յոյսերը մէկտեղ բերէք այն Հօրը, ուրկէ ամէն ազգատոհմ երկրի վրայ անուն կ'առնէ:

(Շալո.)

Թարգ. Ի. Յ. ԱՐՐԱՀԱՄԵԱՆ

Սէնթ Էթիէն

Աստուծոյ մասին յաճախ խօսած էր պնոր, թէ այս գեղեցիկ աշխարհը, թռչունները, ծաղիկները, արեւը, լուսինն ու աստղերը Ան ոչինչէն ըստեղծած էր. թէ մենք մարդիկս ալ Անոր ձեռքերուն գործն ենք, եւ թէ Աստուած մեզ շատ կը սիրէ, մեզմով կը հետաքրքրուի, մեզ մեր անունով կը ճանչնայ, մեր ձայն, կը լսէ երբ Իրեն հետ խօսինք, եթէ Իրմէն բան մը խնդրենք, եւ այլն: Ասոնք ամէնը գիտէր Զարուհին եւ շատ ուրախութեամբ մտիկ կ'ընէր ամէն անգամ որ այդպիսի բաներ կը խօսուէր իրեն:

Չոր քանակներուս քանակ չունէր ան: Ամենէն շատ մտերիմ էր իրեն տարեկից գասընկերուհիի մը հետ, Արփինէ անունով, որ շատ անգամ իրենց տունը կուգար: Շատ քարի, ժպտուն, դասերուն մէջ խելացի եւ իր ծնողքին հնազանդ աղջիկ մըն էր Արփինէն: Զարուհին հայրը լաւ կը ճանչնար զայն եւ կը պատուիրէր որ իր աղջիկը միշտ անոր հետ խաղայ եւ ուրիշ բնկերուհիներու հետ չերթայ:

Օր մը Արփինէ ըստ իր սովորութեան, երբ Զարուհին ծառայութիւն մը մատուց եւ անոր մեծ հաճոյք պատճառեց, այս վերջինը Արփինէի ժպտուն աչքերուն մէջ նայելով եւ իբր շնորհակալութիւն անոր աշտերուն համբոյրներ տալով հարցուց.

— Ըսէ, սիրելիս, ինչո՞ւ այսքան բարի ես ինձի հանդէպ, օր մը ինձի ցաւ չպատճառեցիր, մինչդեռ ես քեզի հանդէպ երբեմն պակաս գտնուած եմ, բայց դուն միշտ ներողամիտ գտնուած ես ու միշտ նոյնչափ սիրած ես զիս: Շատ կը փափաքեմ ես ալ քեզի պէս ըլլալ: Ըսէ խնդրեմ, ո՞ւր սորված ես այսքան բարութիւն:

— Կիրակնօրեայ դպրոցը սորված եմ» պատասխանեց Արփինէ: Բայց որքա՞ն պակաս եմ զեռ սորվածներուս նայելով...

— Կիրակնօրեայ դպրոցն ի՞նչ է...

— Կիրակնօրեայ դպրոցը տեղ մըն է ուր ամէն կիրակի կը հաւաքուինք եւ Աստուծոյ, Յիսուսի, երկինքին, դժոխքին վրայով կը սորվինք ինչպէս նաեւ շատ մը ուրիշ աղուոր բաներ. անկարելի է բոլորը պատմել քեզի:

— Ուրեմն ինչո՞ւ զիս ալ հետդ չես տարած մինչեւ այսօր» հարցուց Զարուհի տխուր ձայնով, վշտացած ակնարկ մը նետելով իր ընկերուհիին վրայ:

— Հայրիկէդ...

Արփինէ խօսքը չլրացուց ու աչքերը գետին յառեց: Այն ատեն Զարուհի անոր ձեռքէն բռնելով տարաւ իր հօրը քով, նետուեցաւ անոր գիր-

կը: Հայրը ջերմօրէն համբուրեց իր աղջիկը, եւ մինչ մէկ կողմէն Արփինէին մագեբը կը շոյէր, հարցուց Զարուհիին,

— Ի՞նչ կ'ուզես, աղջիկս, գիտեմ որ խնդրելիք բան մը ունիս:

— Հայրիկ, չե՞ս ուզեր որ կիրակի օրերը ես ալ Արփինէին հետ կիրակնօրեայ դպրոց երթամ:

Հայրը յանկարծակիի եկաւ: Շատ լաւ գիտէր թէ ի՞նչ կը սորվեցնէին կիրակնօրեայ դպրոցին մէջ: Սակայն մերժե՞լ այդ անուշիկ աղջիկը որ իր պայծառ աչքերը իրեն ուղղած, պատասխանի կը սպասէր անհամբեր: Անկարելի էր: Ինչպէ՞ս կրնար չթուլատրել իր Զարուհիին որ Արփինէին գացած տեղը երթայ: Արդ երկուքը իրարմէ բաժնե՞լ:

— Ինչո՞ւ չէ... աղջիկս... քանի որ Արփինէն կ'երթայ, դուն ալ կրնաս երթալ հետը» յարեց հայրը հակառակ իր կամքին:

Զարուհի գրկեց իր հայրը իբր շնորհակալութիւն, ցատկեց ուրախութեամբ անոր ծունկերէն վար ու իր ընկերուհիին հետ վազելով հեռացաւ: Հայրը նայեցաւ անոնց ետեւէն ու զուխը երերցուց:

Երկու օր վերջ կիրակի էր: Արփինէ, ըստ իր խոստման առաւօտուն եկաւ Զարուհի անոնել, որ շատոնց մաքուր հագուած ու սանտրուած կը ըսպասէր:

Կիրակնօրեայ դպրոցի ամենէն սիրելի եւ կանոնաւոր աշակերտներէն մին եղաւ Զարուհի: Հոն պատեհութիւն ունեցաւ լաւ ճանչնալու Յիսուսը, մեզի հանդէպ Անոր ունեցած սէրը, որ զինքը մղեց երկինքի փառքը թողելու, երկիր իջնելու եւ մեր մեղքերուն համար ու մեր տեղը չարութիւն եւ մեռնելու, որպէսզի մենք իրեն հաւատալով երկինք երթանք:

Ամէն կիրակի տուն վերադարձին իր բոլոր սորվածները հօրը կը պատմէր մեծ խանդավառութեամբ, Հայրը լուռ մտիկ կ'ընէր, բայց միշտ անտարբեր էր Յիսուսի հանդէպ: Զարուհին կ'զգար թէ ինք շատ փոքր էր Յիսուսի մեծ սէրը բացատրելու համար, ուստի կ'ուզէր որ հայրը եկեղեցի երթայ: Վստահ էր թէ հոն քարոզիչը պիտի կրնար համոզել զայն հաւատացեալ ըլլալու: Սակայն հայրը բնաւ սովորութիւն չունէր եկեղեցի երթալու եւ քարոզիչին հետ յարաբերութիւն չէր ընէր: Այս բանը անհուն վիշտ կը պատճառէր աղջնակին:

Օր մըն ալ Զարուհի ծանրապէս հիւանդացաւ:

Մէկ շաբաթ վերջը քարոզիչը լուր ստացաւ թէ փոքրիկ հիւանդը գինք տեսնել կը փափաքի:

Անմիջապէս գնաց:

— Ի՞նչ ունիս, աղջիկս,

հարցուց:

— Մեռնելէս առաջ ձեզ տեսնել կը փափաքիմ:

— Ուրեմն դուն պիտի մեռնի՞ս:

— Ո՛հ, այո, պատուելի:

— Չե՞ս ուզեր առողջանալ, ոտքի ելլել:

— Ո՛հ, պատուելի:

Ի՞նչպէս կ'ըլլայ, քու տարիքդ աղջիկ մը....

— Ըսեմ ձեզի, պատուելի: Կը խնդրեմ որ երբ ես մեռնիմ, իմ թաղմանս դուք ալ գաք եւ Յիսուսի մասին խօսիք: Հայրս ուզէ չուզէ հոն պիտի ըլլայ եւ ձեր խօսքերը պիտի լսէ: Ո՛հ, ես սիրով պիտի ուզէի քանի մը անգամ մեռնիլ, որ պէսզոր հայրս մէկ անգամ Յիսուսի վրայով լսէ:

Խեղճ աղջիկը իրաւ ալ մեռաւ: Բայց ճիշդ թաղման օրը քարոզիչը անկողին ինկած էր, հիւանդ: Անկարելի էր փոքրիկին յուղարկաւորութեանը երթալ: Այս դէպքը մեծ ցաւ պատճառեց իրեն:

Ժամանակ մը վերջ, մարդ մը ներկայացաւ անոր: Շատ ընկճուած եւ տըխուր երևոյթ մը ունէր ան:

— Զիս չէ՞ք ճանչնար, հարցուց:




— Ո՛հ, պարոն, պատասխանեց քարոզիչը:

— Զարուհիին հայրն եմ ես: Իր մահուան անկողնին վրայ ձեզի հետ ունեցած խօսակցութիւնը մտիկ կ'ընէի: Լսեցի թէ ան ինչպէս յօժար էր քանի մը անգամ մեռնելու որպէսզոր ես մէկ անգամ Փրկչին վրայով կարենայի լսել: Յիսուսի մասին նոր բան մը խօսելու գրեթէ պէտք չունիք. ան ամէն ինչ ըսած է ինծի: Սակայն ես յամառօրէն անհնազանդ եղայ...: Շատ կը ցաւիմ: Այժմ իմ փափաքս է որ ձեր մէջ ընդուն-

ԵՐԳ ՄԵԾԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԵՒ ՊԶՏԻԿՆԵՐՈՒ ՅԱՐՄԱՐ

ԹԷ ԸԼԼԱՐ ԻՆՁ ՀԱՉԱՐ ԶԱՅՆԵՐ

Թարգ. Յ. Ն. Ղ.



Թէ՛ ըլլար ինձ հազար ձայներ Տէր, քաղցր անունդ արցունք սրբէ
Երգելու Քեզ, ո՛վ Տէր, Խոովեալ ցաւոտ սրբոյ:
Հրոչակելու ամպերէն վեր Դու ցընծութեան կենաց ես ալ,
Խաչիդ փառքն անվահներ: Սրբոյն կեանք աջ, անեակ:

Իմ Տէրս ե իմ Աստուծան Յիսուս Դու ապաստանս ես, չեմ վախնար
Քու շունչդ այրէ լեզուս, Յաւէ եւ դաւէ չար:
Որ կարենամ անուանդ հրոչակ Թանկ Քու արիւնդ որ թափուեցաւ
Ձայնել զիւղ եւ քաղաք: Պահէ զիս ապահով:

ուիմ: Ես հիմա կը հաւատամ Փրկչիս եւ կ'արտորամ Զարուհիին միանալու Անոր քով...

Քարոզիչը բառ մը չարտասանեց. իր յուզումը չէր կրնար զսպել: Երկուքն ալ կ'արտասուէին: Զարուհիին հայրը սեղմեց անոր ձեռքը ու հեռացաւ եւ դարձաւ Աստուծոյ ամենէն սիրելի եւ հաւատարիմ զաւակներէն մին:

Յ. Բ.

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՄԻՒՆԱԿ

Ֆրանսահայ ԱԼԵՍ. Եկեղեցիներու Միութեան Ժողովը. —

Այս տարի Միութեան Ժողովը եթէ Տէրը կամի, տեղի պիտի ունենայ Վալանսի մէջ, Սեպտ. 23-25ին: «Բանբեր»ի ընտանիքին աղօթքները կը խնդրուի այս մասին:

ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՕՐԱՑՈՑՑԸ

1937ի

(վերջին ծանուցում)

«Բանբեր»ի պատկերազարդ օրացոյցը, որ իր գեղեցկագիտական բոլոր նրբութիւններով եւ ճաշակաւորութեամբ ծանօթ է «Բանբեր»ի ընտանիքին ու անոր միջոցաւ հարիւրաւոր ուրիշ ընտանիքներու, արդէն հրապարակ ելած է, ինչպէս ասկէ առաջ արդէն ծանուցած էինք: Գինը նոյնն է 7. 50 ֆրանք կամ կէս ամերիկեան տոլար արտասահմանի, 6. 50 ֆր. Ֆրանսայի եւ Սուրիոյ համար: Օգոստոսի սկիզբը «Բանբեր»ի հետ արդէն թղթատարի կը յանձնուի անոնց հասցէներուն որոնք արդէն ապսպրած են: 1936 տարին շատեր առանց օրացոյցի մնացին, ոմանք ալ ուշ ապսպրեցին եւ չկրցան գոհացում գտնել, ուստի եթէ Հայ Ընտանիքի Օրացոյցը կ'ուզես յառաջիկայ տարի ունենալ եւ կամ նուիրել բարեկամ ընտանիքի, լաւ կ'ըլլայ որ անմիջապէս ապսպրես, որ չըլլայ թէ վերջը շատ ուշ ըլլայ:

«Բանբեր»ի օրացոյցին օգտակարութիւնը եւ անոր սիրած օրհնութիւնը ակնյայտ է: Ասիկա կը փաստէ անոր ամէն կողմէ փնտռուած ըլլալը:

Այս տարի ալ տպագրութիւնը շատ յաջող անցաւ: Ուրեմն 1937ի մեր տան օրացոյցը յաջորդէ անմիջապէս 1936ի, նաեւ այն տուններուն մէջ ուր Հայ Ընտանիքի Օրացոյցը մտած չէ մինչեւ հիմա:

Մեր նշանաբանն ու փառաքն է «Ամէն հայ ընտանեկան յարկի մէջ մէկ Հայ Ընտանիքի Օրացոյց»:

Շնորհակալութիւն այն ամենուն որոնք ամենապզտիկ ջանք մը ըրին մինչեւ հիմա եւ կ'ընեն ու պիտի ընեն այս նշանաբանը իրականացնելու գործին մէջ: Անով ամէն օրուան աստուածային յուշարար մը կը զրկենք հայ ընտանեաց համար: Տէրը Իր փառքին համար գործածէ զայն: Մեր աղօթքները անոնց կ'ընկերանան: